

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՊՈԶԱՊԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻՆ

(17 փետրվարի 2002 թ.)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Տօգոյն Սրբոյ. ամեն»:

«Որ զօրէնս սրբութեան պահող՝ նախ ի դրախտին աւանդեցեր»:

Այսպէս է երգում շարականագիր բանաստեղծ-հոգևորականը՝ անդրադառնալով Հայաստանյայց Եկեղեցու Մեծ Պահքի շրջանի այս օրվան՝ Արարաքսման Կիրակիին՝ ասելով. «Պահք պահելու օրերը, ո՛վ Տեր, Դու առաջինը դրախտի մեջ սահմանեցիր»: Մեծ Պահքի այս շրջանի երկրորդ կիրակիին փեսնում ենք, որ խորանները փակված են, հոգևորականները բոլորովին սև են հագած: Եկեղեցին ապաշխարության, զոջումի մի շրջան է անցկացնում, որը ավանդվել է մեր Եկեղեցու Սրբազան Հայրապետների կողմից, որպեսզի մենք կարողանանք նախամարդու կորցրած դրախտը վերստին գտնել մեր հոգիների մեջ:

Այսօրվա խորհուրդը կապված է Ադամի ու Եվայի պարվիրանազանության հետ: Նրանք ապրեցին դրախտի մեջ՝ վայելելով դրախտի փափկությունը, դրախտի երջանկությունը, դրախտի ազատությունը: Բայց մի օր սաքանան օձի կերպարանքով մոտեցավ Եվային և ասաց. «Գիտե՞ք, թե Աստված ինչու համար արգելեց ձեզ վայելել պտուղը բարու և չարի գիտության ծառի: Եթե այս պտուղից ուրեք՝ կդառնաք աստվածներ: Աշխարհի բոլոր գաղղնիքները կհասկանաք: Այդ պարճառով էլ, որպեսզի աստվածներ չդառնաք՝ Աստված արգելեց, որ այս պտուղը ուրեք»: Չդիմաւալով գայթակղությանը, Եվան նախ ինքը կերավ, ապա և Գվեց Ադամին: Ադամը ևս, հակառակ իր խոստման, կերավ այդ պտուղը և մեղանչեց:

Դրախտի բոլոր վայելքները ունեցող առաջին մարդիկ անհնազանդության պարճառով մեղանչեցին, ընկան մեղքի թակարդի մեջ: Այդ օրվանից մինչև այսօր մարդիկ քառապում են, մարդիկ իրենց ճակատի քրտինքով են իրենց հացը հայթայթում, կանայք երկունքով են կյանք փալիս. օձը սողում է գետնի վրա և մարդու գարշապարից հեռու է փախչում: Ադամին և Եվային Եղեմական դրախտից արարաքսելիս Աստված այս պարիժները սահմանեց մարդկության անհնազանդ նախահայրերին:

Սաքանան ամեն մեկիս փորճության է ենթարկում, և այդ փորճության ընթացքում եթե մենք սաքանայի ճանկերի մեջ ենք ընկնում, վայ է մեզ համար, որովհետև մեր ամբողջ կյանքը փորճության մի կյանք է, և մենք պետք է փորճություններից կարողանանք հաղթանակով դուրս գալ՝ ինչպէս Հիսուս:

Հիսուս իր քարոզության սկզբում անսպարում քառասուն օր ապաշխարությամբ և զոջումով էր նախապարտաստվում, ինչպէս սովորություն էր եբրայեցիների բոլոր քահանաների և մարգարեների, որոնք երեսուն փարեկանում քարոզությունից առաջ

քաշվում էին անապար՝ այնպեղ ճգնելու, և երբ Հիսուս իր ճգնության քառասունօրյա այդ շրջանն էր անցկացնում, սափառան մոտեցավ և ասաց. «Ես էլ եմ անոթի, դու՛ էլ: Արի, այս քարերին շունչ փուր, թող հաց դառնան, որ ուրենք, անոթի չմնանք»:

Հիսուս, այո՛, Աստված էր, կարող էր քարերը հացի վերածել, բայց ասաց. «Քո Տիրոջը մի՛ փորձիր»: Մի ուրիշ օր էլ սափառան Տիրոջը բարձրացրեց մի աշտարակի վրա և ասաց. «Այսպեղից եթե քեզ ներքև գցես, հրեշտակները կպահեն քեզ», ինչպես սաղմոսերգուն ասում է. «Հրեշտակաց խրոց պափուիրնալ է վասն քո... զի մի՛ երբեք հարցես զքարի զփուն քո» (Մատթ. Դ 12): Հիսուս վերադարձավ և ասաց. «Երբիս գնա»: Երբորդ անգամ Տիրոջը Երուսաղեմի բարձունքում ասաց. «Անավասիկ ամբողջ աշխարհը, իր բնակիչներով, իր շինություններով, իր հարստությամբ, իր ամեն ինչով քեզ կտամ, եթե ի՛նձ երկրպագես»: Հիսուս ասաց. «Քո Տեր Աստվածն մի՛ փորձիր»:

Մենք ապրում ենք մի աշխարհում, ուր փորձությունները միշտ մեզ են հետևում, մեղքը միշտ մեր կողքին է, մեղքը շվաքի պես մեզ է հետևում՝ մեզ մշտապես ենթարկելով բազում փորձությունների: Մակայն մեր Սրբազան Հայրապետները քառասունօրա պահեցողության այս շրջանը հափկապես փնտրինել են մեզ համար, որպեսզի մենք մեղքից հեռու մնանք, կարողանանք աղոթքով, պահեցողությամբ, զոջումով և ապաշխարությամբ մաքրել մեր հոգիները:

Պահեցողությունը միայն մտեղենից և կենդանական սննդից հրաժարվելը չէ՛, սիրելիներ: Պահեցողությունը նաև մեր լեզուները զսպել կարողանալն է՝ մեղք չգործելու և չքամբասելու համար, չհայհոյելու և ուրիշների մասին վատ վկայություններ չտալու համար: Այն մեզ համար մեր մոլություններից հեռու մնալու շրջան է: Չափազանց ծիսելը, հարբեմալը և փարբեր թմրեցուցիչները մեր հոգին փկարացնում և աստվածային փաճար համարվող մեր մաքուր մարմինը, որպեղ մեր Տերը՝ Հիսուսը, պիտի բնակվի, եղծանում են: Այս ամենից հեռու մնալու համար է, որ պահեցողության այս շրջանն է փնտրվել: Այո՛, պահեցողությունը նաև զոջումի շրջան է, և զոջումին անպայմանորեն հետևում է ապաշխարությունը:

Ամեն մարդ, որ մեղավոր է, պետք ունի զոջման, ամեն մեղավոր պետք ունի ապաշխարության:

Պողոս առաքյալը, որ Մոդոս էր մինչ դարձի գալը, հալածում էր քրիստոնյաներին: Մի օր, Հիսուսի համբարձումից հետո, նա իրավունք ստացավ քահանայապետներից, որպեսզի գնար Դամասկոս, այնպեղի հրեա քրիստոնյաներին ևս ձերբակալելու, պատժելու և նույնիսկ մահվան դատապարտելու: Մոդոսին Դամասկոսի ճանապարհին հանկարծ մի հրաշք է պատահում, մի ահռելի լույս է բացվում նրա աչքերի առջև, և նա, շփոթված այդ լույսի զորությունից, պայծառությունից, ձիուց վայր է գլորվում և ապշահար հարց տալիս, թե այս ինչ լույս է: Այդ պահին մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, նրան հարցնում է. «Մոդո՛ս, ինչո՛ւ ես ինձ հալածում»: Լույսի շողքից Մոդոսի աչքերը կուրանում են: Հիսուս նրան ասում է. «Երբ Դամասկոս հասնես, այնպեղ Անանիա անունով մի քրիստոնյայի կհանդիպես, նա՛ քեզ կբուժի»: Այսպիսով հեթա-

նու Սողոսը դառնում է քրիստոնյա Պողոս առաքյալը՝ ամենամեծ ջախջախող քրիստոսի վարդապետության:

Սուրբ Օգոստինոս Նայրապար, որ ապրել է չորրորդ դարում, ծնունդով ալժերիացի էր, բայց ապրում էր Հռոմում: Նրա մայրը քրիստոնյա էր: Ինքը ժամանակի հայտնի փիլիսոփաներից մեկն էր: Նա մեկ անգամ Սուրբ Գիրքը վերցրել էր կարդալու: Հագիվ երկու փող կարդացած, գցել էր մեկ կողմ՝ ասելով, թե շատ պարզունակ է իրեն համար, բայց ահա երբ ծանոթացավ աշխարհի մյուս կրոններին և այդ կրոնները ուսումնասիրեց, փեսավ, որ այդ կրոնների մեջ չկա իր հոգին, իր փնջերը բավարարող ոչ մեկ միսիթարություն: Եվ երբ Միլանում Ամբրոսիոս եպիսկոպոսի քարոզները լսեց, նրա քարոզներից ազդված գնաց եկեղեցու դիմացի այգին՝ խորհրդածելու, խոկալու, թե ինչ պետք է անի իր հոգին խաղաղեցնելու համար:

Հանկարծ մի երեխա մոտեցավ նրան և ասաց. «Ա՛ռ, կարդա՛»: Անհավար Օգոստինոսը վերցրեց Աստվածաշունչը և կարդաց: Եվ կարդալով անդրադարձավ, որ իր ողորմելի կյանքը, ցուփոթյամբ և զանազան փեսակի մեղքերով լեցուն, անիմաստ է մի սովորական քրիստոնյա հավաքացյալի կյանքի համեմատությամբ, և ինքն իր ամբողջ գիտելիքներով Աստծո աչքի առջև ոչ մի արժեք չի ներկայացնում: Անդրադարձավ և քրիստոնեությունը ընդունեց, կարդաց Սուրբ Գիրքը և գտավ այնպեղ իր հոգու միսիթարությունը, որից հետո իր այլ գործերի շարքում գրեց «Խոստովանություն» անունով հոգեթով աղոթքների շարքը, ինչպես Նարեկացին հեղափոխում գրեց «Ի՛նչ խորոց արքի խօսք ընդ Աստուծոյ» հոգեգմայլ աղոթալից Մատյանը:

Մի՞թե, սիրելի հավաքացյալներ, Տրդատ թագավորի կյանքը մի անդրադարձ չէ՞ր, զոջում և ապաշխարություն չէ՞ր, մեղքից դեպի արդարության լույսը դառնալու, աստվածային ճշմարտությանը դառնալու մի առիթ չէ՞ր: Նա մի հրովարդակ էր արձակել Վայաստանում գրավող քրիստոնյաներին հալածելու և խտրագույն ձևով պատժելու համար: Սակայն Լուսավորչի չարչարանքները, Հռիփսիմյանց կույսերի նահապակությունը եկան իր մեջ անդրադարձ փալու, որ ինքը սխալ ճամփի վրա է և փրկվելու կարիքն ունի վիրապում բանտված Սուրբ Գրիգորի աղոթքների միջոցով:

Միրելի հավաքացյալներ, փեսե՛ք, թե ապաշխարության ինչպիսի առիթներ է ընծայում մեզ Աստված: Քառասնօրյա պահեցողության այս շրջանը մեզ համար անդրադարձի մի շրջան է: Բացի պահեցողությունից, անդրադարձի՛, որ մեղքերից կարողանանք ձերբազատվել և Աստծո արքայությանը ձգտել մեր կյանքի այս օրերին:

Թող բարին Աստված Արարաբսման այս կիրակի օրվա խորհրդով մեզ անդրադարձ պարզևի դեպի իր փառավոր լույսը դառնալու, դեպի մարդկությունը դառնալու, ողորմած և գթասիրտ լինելու, ջամբասելու, չհայեղելու և մեր մոլություններից հեռու պահի մեզ, որպեսզի այդպիսով կարողանանք պահքի ավարտին արժանանալ Քրիստոսի Հրաշափառ Հարության օրվան, որ հարություն պիտի պարզևի նաև մեր հոգիներին այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն: